

* * *

Ստվերների շեղում... միահյուսված ձեռքեր...
Անկինջ լուսնի զննող, խորաթափանց հայացքը...
Օ՛հ, իմ նկարչուհի, չկայացած ընկեր՝
մենակ եմ, առանց քեզ դատարկ է կյանքս:

Աչքերս կընկղմեմ անհունձ հունիսի մեջ
եւ խենթության ալիք կայրի հանկարծ հոգիս,
կարծես կրկին անզուսպ ու պատանի եմ ես
ու սերը առաջին ձեռքով կանչում է ինձ:

Բույրերը գիշերվա գլուխ են արբեցնում,
իսկ վերելում, որտեղ ծնվում է զով թովչանքը,
երամ կազմած դեպ քեզ բառեր են սլանում.
«Մենակ եմ առանց քեզ... դատարկ է կյանքս...»

Այսուհետեւ՝ հավետ, հոգոցը մինչ վերջին
թող կյանքը բարությանը լինի ընդմիշտ լեցուն,
թող միշտ ձեռքիդ լինի քեզ հնազանդ վրձին
եւ կտավիդ՝ աղոթք, այլ ոչ ունայնություն:

Ես լավագույն բառերն եմ որոնում կրկին,
քանի որ, թե լքի մեզ շնորհն Աստծո, օրհնանքը,
երկուսս էլ կգոռանք, վրձին՝ դու, ես՝ գրչին.
«Մենակ եմ առանց քեզ: Դատարկ է կյանքս»:

Անհետ կհեռանան երազն ու իրականը,
ինչ որ սիրում ես դու, ինչն ատելի է քեզ:
Սակայն, թե այս պահին բացես քո պատուհանը,
դու կցնցվես իսկույն, կապշես ու կտեսնես.

Մարմիններից ու խառն երազներից վերել
հուր բառերից շարված հետագծի խոյանքը,
ձգված հեռվից հեռու մեր երկուսիս միջեւ.
մենակ... եմ... առանց... քեզ... դատարկ... Է... կյանքս...

1981

Ալեքսանդր Պուշկին

* * *

Սիրելի եմ ձեզ: Եւ սերն էլ այդ գուցեւ
Դեռ չի մարել իսպառ հոգուս խորքում:
Բայց թող որ չտանջի այն ձեզ այլեւս.
Ես վշտացնել բնավ ձեզ չեմ ուզում:

Սիրելի եմ ձեզ անձայն, անհույս սիրով եւ
Եղել խանդի, երկչոտության գերի:
Սիրելի եմ ձեզ այնքան քնքուշ սիրով, որ,
Աստված տա, ձեզ ուրիշն այդպես սիրի:

Օլեգի վահանը

Ալեքսանդր Պուշկին

Երբ Կոստանդին կայսրի քաղաքը
Քեզ հետ, վարյազ դու ռազմատենչ,
Եկավ սլավոնական ջոկատը
Եւ հաղթության դրոշ ճոճեց,
Դու տոնեցիր ռուս զենքի փառքը.

Ի վախ ու քեն համառ հույնին
Դու մեխեցիր պողպատ վահանդ
Կոստանդնուպոլսի դարպասին:

Ահա եկան ռազմի օրերը
Եւ քո ճամփով անցանք կրկին,
Բայց երբ նորից փառքով օծված մենք
Դեպի Ստամբուլ գոռ հոսեցինք
Դղրդալով ցնցվեց բլուրդ
Խանդոտ հառաջդ մեզ շեղեց
Եւ Ստամբուլի առջեւ մեր զորքը
Քո հին վահանը կանգնեցրեց:

Բորիս Պաստերնակ

Եզակի օրեր

Բազում ձմեռների շարքում
Յիշում եմ արեւադարձերը՝
Անկրկնելի բուլորն էլ, ու
Նրանց անթիվ կրկնությունները:

Եւ մի ամբողջ շղթա կազմեց
Այդ եզակի օրերի շարքը,
Երբ մեզ թվում է, թե սառեց,
Թե կանգառել է ժամանակը:

Դրանք հիշում եմ մեկ առ մեկ.
Յասնում է կեսեծին ձմեռը,
Ճամփեքը թաց են եւ անբեկ
Շողում է սառույցին արեւը:

Եւ չարթնացած ասես, քնից
Միմյանց ձգվում են սիրողները,
Եւ ծառերին, ջերմությունից,
Քրտնում են սայրակաթները:

Եւ սլաքներն են կիսաթունս,
Դանդաղ ու ծուլ են պտույտները
Եւ օրը դար է շարունակվում
Եւ չեն դադրում սեղմվել գրկերը:

1959

* * *

Ոչ ոք տանը չի լինի, սոսկ
Մթնշաղը: Սոսկ անթուն
Ձմռան օրվա հոսքը անհոգս
Վարագույրի բացվացքում:

Միայն լիկած քուլաների
Արագ երթն է կայծկլտուն
Միայն ձյունն է կտուրների,
Չկա ոչ ոք էլ բակում:

Ծաղկած եղյամի նույն գիծը:
Ու կպտտի ինձ նորից
Անցած տարվա նույն թախիծը
Մեկ այլ ձմռան հուշերից,

Ու կծակի սիրտը կրկին
Դեռ չքաված մեղքը հին
Ու խաչարդը պատուհանին
Քաղց կճգմի փայտային:

Վարագույրով սակայն, հանկարծ
Դող կանցնի՝ ու քայլերով
Գալիքի պես դու ներս կգաս
Լռությունը չափելով:

Կհայտնվես շեմին անբիծ
Ինչ-որ, ճերմակ պարզ զգեստում
Իրավ նյութից այն նուրբ, որից
Փաթիլներն են ձյան կարում:

Մարինա Յվետայեվա

* * *

Թավշյա ծածկոցն ու ջերմությունը
Յիշեցրեցին երազն անցած:
Այդ ի՞նչ էր եւ ո՞ւմ հաղթությունը
Ո՞վ է պարտված:

Կրկին հիշում եմ այդ երազը,
Կրկին տանջվում եմ մտահոգ.
Ի՞նչ կար այնտեղ, ի՞նչ էր եղածը,
Կա՞ր սեր արդյոք:

Ո՞վ էր որսորդը, ո՞վ էր որսը.
Ամեն ինչ խառն էր երազում:
Ի՞նչ էր խորհում, երբ մռմռում էր
Անհոգ կատուն:

Մենամարտում այն ո՞րն էր գինը
Ո՞վ, ո՞ւմ ձեռքում լոկ գնդակ,
Ո՞ւմ սիրտն էր, ձե՞րն էր այդ, թե՞՞ իմը,
Ցատկում արագ:

Բայց եւ այնպես, այդ ի՞նչ դիպված էր,
Իչո՞ւ է սիրտս խռովված:
Եւ չիմացա. արդյո՞ք հաղթաց եմ,
Կամ թե պարտվա՞ծ:

* * *

Ինչ լավ է, որ ինձնով չեք դուք հիվանդ,
Ինչ լավ է, որ ձեզնով հիվանդ չեմ ես էլ,
Եւ ծանր երկրագունդն երբեք հանկարծ,
Որ չի լողա-փախչի ոտքի տակից մեր:
Ինչ լավ է, որ կարող եմ ես լինել
Անլուրջ, ազատ, չխաղացնել բառերը:
Եւ ալիքով խեղդող չկարմրել,
Երբ պատահմամբ հավում են մեր թեւերը:

Ուրախ եմ ես, որ իմ ներկայությամբ
Դուք շատ հանգիստ գրկում եք ուրիշին եւ
Չեք ուղարկում դժոխք ասելությանբ,

Քանի որ համբուրում եմ ուրիշին ես:
Որ նրբագեղ անունը իմ անվերջ
Չեք կրկնում գիշեր, ցերեկ՝ ունայն,
Որ եկեղեցական լռության մեջ
Մեզ չեն երգի երբեք ավելույա՛հ:

Սրտով, ձեռքով ես շնորհակալ եմ ձեզ,
Որ դուք ինձ ականա այդքան սիրում եք,
Նաեւ, որ գիշերով հանգիստ եմ ես,
Մայրամուտին, որ քիչ ենք հանդիպում մենք,
Լուսնի տակ մեր չգբոսնելու համար
Եւ արեւի՝ որ մեր գլխավերում չէ,
Որ դուք հիվանդ եք ոչ ինձնով, ավաղ,
Որ ես, սակայն ձեզնով, ավաղ, հիվանդ չեմ:

Ֆյոդոր Տյուտչեւ

SILENTIUM!

Լռիր, եւ թաքնվիր, թաքցրու,
Չգացմունք, երազ քո լռեցրու
Եւ թող հոգուդ խորքում անտակ
Ելնել ու մայր մտնեն նրանք
Անձայն, աստղեր գերդ խավարի՝
Յրճվիր լույսով այդ՝ ու լռի՛ր:

Ինչպե՞ս քո սիրտն իրեն բացի,
Ուրիշն արդյո՞ք քեզ կըմբռնի,
Կհասկանա՞ քեզ: Ո՛չ, ցավոք,
Արտաբերված միտք՝ սուտ է լոկ:
Պորտկումն ակունք կաղտորի՝
Մնվիր քրով այդ՝ ու լռի՛ր:

Քո՛ մեջ ապրել կարողացիր,
Յոգումդ աշխարհ ունես անծիր
Քո խոհերի գաղտնակախարդ.
Այն կջնջի աղմուկն անդարդ
Եւ լույսն օրվա այն կցրի՝
Լսիր այդ երգը՝ ու լռի՛ր...

Տերեւները

Սոճին, եղեւնին
Ողջ ձմեռը ցցված
Քնեն թող բքին
Ցուրտ ձյան մեջ փաթաթված:
Կանաչը վտիտ նրանց
Չոր, ոզնածեւ,
Երբեք չի դեղնում,
Բայց եւ թարմ չի երբեք:

Իսկ մենք անհոմգ զարմ ենք,
Ծաղկում ենք, փայլում,
Ճյուղերը շատ կարճ են
Մեզ հյուրընկալում:
Ամբողջ շոգ ամառը
Չարդով ենք փայլել,
Պարել շողերում
Ու ցողում լողացել:

Սակայն ավարտել են
Երգերն թռչնակներն,
Լույսերը խամրել են,
Անցել զեփյուռներն:
Էլ պե՞տք է կախված
Մենք մնանք ու դեղնենք.
Լավ է, որ մենք էլ
Նրանց հետեւենք:

Հողմեր մոլեգին,
Օ՛, շտապե՛ք դուք, շտապե՛ք,
Շուտով ձանձրալի
Ճյուղերից մեզ պոկեք:
Պոկեք եւ տարեք,
Մենք մեզ ձեզ ենք տալիս,
Թռե՛ք, սլացե՛ք,
Մենք ձեզ հետ ենք գալիս...

Ցիցերոն

Հռոմեացի հրետորն ասավ
Քաղաքամարտերի միջին.
«Ես ուշ ելա՝ ճանապարհին
Հռոմի գիշերն ինձ վրա հասավ»:
Այդպե՛ս է...բայց հրաժեշտ տալով
Հռոմի փառքին, անհույս ցավով
Կապիտոլյան բարձրությունից
Ողջ վեհությամբ տեսար գահից
Նրա աստղի անկումն արևոտ:
Երանելի է այցելածը
Աշխարհն այս օրհասի պահին.
Բարձրյալների կողմից կոչված է
Նա զրուցակցի պես խնջույքի:
Նա իրենց վեհ խաղի դիտողն է
Իրենց խորհուրդն է այցելել,
Եւ դեռ ողջ-ողջ, երկնակյացի պես,
Անմահության գավաթն ըմպել:

Սամուիլ Մարշակ

Տ. Գ.

Գրում են մարդիկ եւ ջնջում է
Ժամանակն ինչ կարող է ջնջել,
Բայց ասա. եթե ունկը մեռնում է
Մի՞թե ձայնն էլ ստիպված է մեռնել:

Գնալով այն լռում, խլանում է
Եւ արդեն խառնվում լռությանը,
Եւ ունկով չէ՛ սրտով եմ լսում ես
Այդ ծիծաղն ու այդ թավ կրծքաձայնը:

Ուղեբեռը

Տիկինը հանձնում էր բեռներ.
Բազմոց, ուղեպարկ, նկարներ,
Ճամպրուկ, գամբյուղներ, տակառիկ
Եւ փոքր, սպիտակ մի շնիկ:

Երբ տիկինը եկավ կայարան
Տվեցին նրան չորս ստացական
Այն մասին, որ ստացել են բեռներ.
Բազմոց, ուղեպարկ, նկարներ,
Ճամպրուկ, զամբյուղներ, տակառիկ
Եւ հետն էլ փոքրիկ մի շնիկ:

Տանում են բեռները, դնում,
Շարում բացօթյա վագոնում
Պատրաստ է: Շարած են բեռները.
Բազմոց, ուղեպարկ, նկարները,
Ճամպրուկ, զամբյուղներ, տակառիկը
Եւ փոքր, սպիտակ այն շնիկը:

Բայց հենց որ գնացքը շարժվեց
Շնիկը տեղից իր ծկեց:
Սակայն այդ մասին իմացան,
Երբ Դևո կայարանը հասան:

Ապշած են, հաշվում են բեռները.
Բազմոց, ուղեպարկ, նկարները,
Ճամպրուկ, զամբյուղներ, տակառիկը:
Տիարք, իսկ որտե՞ղ է շնիկը:

Տեսնում են հանկարծ, խոտերում
Նստած է մի մեծ փրչոտ շուն:
Բռնում ու խցկում են այն տեղը,
Որտեղ էին եւ նկարները,
Ճամպրուկ, զամբյուղներ, տակառիկը,
Որտեղ նախկինում այն շնիկն էր:

Ահա եւ իջնում է տիկինը
Համար տասնհինգ բեռնակիրը
Սայլին է բարձում նրա բեռը.
Բազմոց, ուղեպարկ, նկարները,
Ճամպրուկ, զամբյուղներ, տակառիկը,
Դե, եւ, իհարկե՛ շնիկը:

Իսկ շունը ոռնում է հանկարծ,
Տիկինն էլ գոռում է ապշած.
- Իմ շունն այլ տեսակ էր,- գողեր,
Այլանդակ, կողոպտիչ կեղտոտներ:

Նա դեն է նետում նկարները
Ոտքով հեռացնում զամբյուղները,
Ճամպրուկը,
ապա
տակառիկը.
- Ո՞ւր է, ասե՛ք, իմ շնիկը:

- Ինչպե՞ս թե, տիկին: Կայարանը
Տվել է ձեզ այս ստացականը
Այն մասին, որ հանձնել էք բեռներ.
Բազմոց, ուղեպարկ, նկարներ,
Ճամպրուկ, զամբյուղներ, տակառիկ
Եւ հետն էլ, այո, մի շնիկ:

Սակայն
Շարժվելու ընթացքում
Կարող էր դառնալ նա
Մեծ շուն:

Փոստը

Բորիս ժիտկովին

1

Ո՞վ է թակում դուռը իմ՝
Պայուսակը աջ ուսին,
5 համարը սեւ գոտուն
Համազգեստով կապտավուն:
Ո՞վ է նա,
Ո՞վ է նա:
Փոստատարն է, պարզ է, նա:

Պայուսակում
Այսօր շատ կան
Նամակներ.
Տոմսկից,
Եւ Տաշքենդից,
Տագանրոգից,
Տամբովից,
Բաբվից:

Յոթին գործը նա սկսեց,
Տասին բեռը իր կիսվեց,
Իսկ արդեն տասներկուսին
Ավարտեց ամբողջովին:

2

- Ստացե՛ք պատվիրված ծրար՝
Տիար ժիտկովի համար:
- Այդ Տիարը, սիրելի՛ս,
Չի լինելու մեկ ամիս:

- Ինչպե՞ս գտնենք ժիտկովին:
- Նա երեկ մեկնեց Բեռլին:

3

Ժիտկովը թռչում է
Օդով, սլանում է.
Երկիրն է սահում ներքեւում,
Եւ նուրբ հետագիծը:
Նրա հետեւից էլ
Գնացքը նամակն է տանում:

Բոլոր փաթեթները
Ունեն ճիշտ տեղերը
Հատուկ փոստային վագոնում,
Եւ երկու փոստատար
Շուրջ զշերն անդադար
Ծանրոցներ, նամակներ են դարսում:

... Բացիկը՝
Վարշա՛վա,

Շանրոցը՝
Օտտա՛վա,

Այս թերթը՝
Դեպի Սախալին:

Նամակը՝
Կարա՛րա:

Ահա եւ ծրարը,
Որ ուղեւորվում է Բեռնլին:

4

Բեռնլինի փոստատարն է քայլում,
Լրագրերն է վերջին տարածում:
Այնքա՛ն պճնամոլն է, գիտե՛ք.
Գլխարկին՝ կարմրավուն եզրաշերտ,

Մուգ-կապույտ բաճկոնի վերելում
Վրակարն է կանաչ շողշողում:
Իր ձեռքում նա պահում է բարակ,
Այլերկրյա ծրարով մի նամակ:

Չորս կողմում անցորդներ են շտապում
Ու ինքնաշաժներ են խշշում՝
Մեկ-մեկու վազանցում են արագ՝
Շարժվելով ծառուղու ստվերի տակ:

Փոստատարը մոտենում է
Հյուրանոցի դռներին
Ու դռնապանին ասում է.
- Նամակ Տիար ժիտկովին:

Բայց հնչում է պատասխան.
- Լոնդոն մեկնեց նա սակայն:

5

Նամակն
Ինքն իրեն
Ոչ մի տեղ չի գնա,
Բայց թե նրան արկղ գցես,
Նա կվազի,
Կթռչի,
Կլողա,
Կանցնի նա հազար ու մի վերստ:

Նամակին դժվար չէ
Աշխարհը տեսնել.
Տոմսի կարիք նա չունի:
Սոսնձված
Ուղեւորը
Պղինձ դրամով
Տարբեր երկրներ կանցնի:

Ճամփին
Ոչ ուտում է նա,
Ոչ էլ խմում,

Մի բան է միայն
Անդադար կրկնում.
- Շտապ հանձնե՛ք՝
Անգլիա,
Լոնդոն,
Վեստ,
Բոբկին փողոց,
Չորրորդ շենք:

6

Աջ ու ձախ շտապում, շարժվում են
Գույնզգույն ինքնաշարժներ,
Վերելներում տատանվում են
Պաստառներ ու գովազդներ:

Բարձր է վարորդի խիստ ձայնը.
- Բոբկին-սթրիթ. վերջին կանգառն է:

Իսկ Բոբկին փողոցով, արագ,
Գլխին դրած կապույտ գլխարկ,
Քայլում է Սմիթը փոստատար՝
Լուրդ ու չոփի պես նիհար:

Գտնում է շենքը նա չորրորդ,
Թակում է դուռը մուրճիկով:
Հանձնում է նա դռնապանին
Այն նույն նամակը՝ Ժիտկովին:

Բայց նայելով այդ ազգանվանը՝
Պատասխանում է դռնապանը.
- Բորիս Ժիտկովը, ներեցե՛ք,
Բրազիլիա մեկնեց երեկ:

7

Շոգենավը
Կշարժվի
Երկու թոպեից:
Տեղ չկա էլ խուցերում
Տարբեր բեռներից:

Սակայն
Խուցերից մեկում
Ճամպրուկներ չեն տեղադրում:
Այնտեղ կլինեն միայն
Փոստն ու փոստատարն:

8

Բրազիլիա, Բրազիլիա.
Սպիտակ արեւ ու շոգ:
Ծեր փոստատար Բազիլիոն
Անցնում է փողոցով,

Ձեռքին՝ տարօրինակ տեսքի
Եւ ճմրթված նամակ,
Նամականիշն՝ օտարերկրյա
Եւ անձանոթ դրոշմակ:

Իսկ ազգանվան կողքին, ահա՛
Մի փոքր գրություն.
Հասցեատերն մեկ օր առաջ
Վերադաձել է տուն:

9

Ո՞վ է թակում դուռը իմ
Պայուսակը աջ ուսին,
5 համարը սեւ գոտուն,
Համազգեստով կապտավուն:
Ո՞վ է նա,
Ո՞վ է նա:
Փոստատարն է, պարզ է, նա:

Ու մեկնում է նա կրկին
Այն նամակը՝ ժխտովին:

- Ժխտովի՞ն:
Բորի՛ս, արի՛,
Ստացի՛ր եւ ստորագրի՛:

10

Վեր թռավ իմ հարեւանը.
- Դու մի տե՛ս՝ ի՞նչ հրաշք բան է.
Այս նամակն իմ հետքերով
Երկրագունդն անցավ բոլոր:

Ծովերով այն սլացավ,
Մինչ Ամազոն նա հասավ:
Նավերով, զնացքներով
Նա շարժվեց իմ հետքերով:

Սար ու ձորեր, ծովեր կտրած՝
Հասավ նամակն ինձ կրկին:
Փա՛ռք ու պատիվ փոշոտ, հոգնած
Փոստատարներին մեր տանջված:

Փա՛ռք փոստատար ազնիվ մարդկանց՝
Ծանր բեռը ուսերին:

Իոսիֆ Մանդելշտամ

Կառապանը

Խուլ ու բարձր էր լեռնանցքը,
Մահմեդական կողմերում
Մահվան հետ էր մեր խրախճանքը,
Սարսափն՝ ինչպես երազում:

Կառապանը մեր այրված էր,
Չամչի նման խորովյալ,
Սատանայի քշող, ասես,
Հակրճախոս ու մռայլ:

Մեկ արաբի կոկրդային
Գոռոց, կամ «ցո՛» անիմաստ.
Որպես դողոշ, կամ վարդ անգին
Դեմքն էր պահում թաքցրած.

Դիմակի տակ, կաշվե, պահած
Դիմագծերն ահավոր
Նա քշում էր խռփահատված
Սայլակն անհայտ տեղ ինչ որ:

Թափ էր առնում կառքը, ցնցվում,
Անհնար էր վայր իջնել,
Իջեւանատներ, կառքեր
Սկսեցին պտտվել:

Ես սթափվեցի: Կանգնիր, ընկեր,
Չարքը տանի, թող հիշեմ.
Դա ժանտախտոտ նախագահն է
Ձիերի հետ մոլորվել:

Նա է անքիթ լուռ տախտկությամբ
Վարում, հոգի արբեցնում,
Որ պտտվի ոտքերի տակ
Քաղցրաթթվաշ հողն անթուն:

Ես Լեռնային Ղարաբաղում՝
Գորշ գիշատիչ Շուշիում
Ճաշակեցի վախն այդ ցնցուն
Յամաբնույթ իմ հոգուն:

Չորս բյուր մեռյալ պատուհաններ
Ամենուրեք: Անոգի
Աշխատանքի բոժոժն անտեր
Թաղված գոգին սարերի:

Եւ անամոթ վարդագունող
Շինություններ մերկացած,
Իսկ վերելում սեւին խփող
Կապույտ ժանտախտն արթնացած:

SILENTIUM

Բայց չի ծնվել նա տակավին,
Նա եւ նվազն է, նա եւ բառն է,
Ուստի եւ անխախտելի կապն է
Կենդանաշունչ ամեն բանի:

Յանդարտ շնչում են ստինք ծովի,
Բայց խենթի պես պայծառ է օրը,
Եւ եղբւանագույն փրփուրը
Սեւալագուր այդ անոթի:

Թող որ շուրթերս ձեռք բերեն
Սկզբնական սուրբ համրությունը,
Դառնան այն բյուրեղյա հնչյունը,
Որ ջինջ է ծննդից ի վեր:

Փրփուր մնա Աստղիկ աստված
Եւ բա՛ռ, նվազ վերադարձիր,
Եւ սի՛րտ, սրտից դու ամաչիր,
Կյանքի նախահիմքին հյուսված:

Մաքսիմիլիան Վուրշին

* * *

Այնքան մեծ է սիրո քո տենչանքը.
Կշտամբում է, ողբում՝ խնդրելով...
Սիրիր նրան լուռ խստությամբ եւ
Սիրիր կամացուկ հալելով:

Թող լույս տա նրան սպիտակ հուրդ՝
Անծուխ, անտրտում ու անկամք:
Սիրիր նրան զվարդ դու մարմնովդ,
Սրտովդ՝ սիրիր ցավահար:

Թող սիրո արարած ուրվականը
Այլ դեմք իրենով չփակի, -
Սիրիր նրան այնպես, ինչպես կա նա՝
Չասարակ, հողեղեն, կենդանի:

Մնապաշտ պահելով իր նշանը
Վախով մի նայիր այլ հավատին...
Սիրիր նրան շեշտ ու հաստատ եւ
Սիրիր նրան ճիշտ հենց սրտին:

Կոնստանտին Սիմոնով

* * *

Սպասիր ինձ, եւ ես ետ կգամ,
Միայն թե շատ սպասիր:
Սպասիր երբ անձրեւներ կգան
Դեղին ու նանիր,
Սպասիր, երբ շոգ է սոսկալի,
Երբ բուք է գալարում,
Սպասիր, երբ շատ ուրիշներին
Այլեւս չեն սպասում:
Սպասիր, երբ հեռավոր երկրեն
Նամակ էլ չհասնի,
Սպասիր, երբ սպասելն արդեն
Այլոց կձանձրացնի:

Սպասիր ինձ, եւ ես ետ կգամ,
Բարի մի ցանկանա
Նրանց, որ կպնդեն անգամ,
Որ պետք է մոռանալ:
Թող հավատան որդի եւ մայր,
Թե ես արդեն չկամ:
Թող չսպասեն ընկեր, եղբայր,
Նստեն ու միաբան
Խմեն ու կրկնեն նրանք.
- Աստված թող ողորմի...
Սպասիր հաստատ եւ դառնահամ
Գինին այդ մի խմի:

Սպասիր ինձ եւ ես ետ կգամ
Մահվանը հակառակ:
Ով չի սպասել կասի, սակայն.
- Ծնվել է հաջողակ:-
Ով չի սպասել խոր հավատով
Ինչպե՞ս դա ըմբռնի,
Որ կրակից, քո հավատով

Այդ դո՛ւ փրկեցիր ինձ:
Ինչպէս ինձ հաջողվեց փրկվել
Կիմանանք մենք միայն.-
Որ դու կարողացար սպասել
Բոլորից լավ այդքան:

1941

* * *

Քսիր իմ քաղցրիկս, քսիր
Լռել են երկինք ու երկիր:
Ձկնիկը քնել է լճում,
Թռչնակը լռել է բակում,
Լուսնի արծաթյա շողերում
Ծառերն ու խոտերն են ննջում...
Աչքերդ արագ դու փակիր:
Քսիր իմ քաղցրիկս, քսիր,
Քսիր, քսիր...

Ամեն ինչ վաղուց է լռել,
Բոլոր սենյակներն են մթնել.
Եւ ոչ մի դուռ չի ճռճում,
Մկնիկն է ննջում իր բնում:
Յոգոց է լսվում ուշ ժամին,
Բայց մե՞զ ինչ, ոսկի իմ անգին:
Աչքերդ արագ դու փակիր:
Քսիր իմ քաղցրիկս, քսիր,
Քսիր, քսիր...

Իսկ վաղը կրկին կխաղաս,
Ու կվազես կինդաս:
Ես վաղը բակում քեզ համար
Ծաղիկ կբաղեմ անհամար:
Ամեն ինչ, ամեն ինչ կանեմ,
Միայն թե չլա իմ բալեն:
Աչքերդ արագ դու փակիր:
Քսիր իմ քաղցրիկս, քսիր,
Քսիր, քսիր...

* * *

Մի հեռացիր, եղիր ինձ հետ դու,
Այստեղ ծաղկունք է լուսեղեն,
Ես քո աչերն ու շրթունքներդ
Յամբոյրներով ջերմ կպատեմ:

Մի հեռացիր, եղիր ինձ հետ դու,
Վաղուց եմ քեզ սիրում արդեն,
Ես կրակոտ գուրգուրանքով իմ
Քեզ եւ կայրեմ, եւ կտանջեմ:

Մի հեռացիր, եղիր ինձ հետ դու,
Ծառավ սրտումս այրվում է կիրք,
Դեռ առջեւում սիրո բերկրանքն է
Մի հեռացիր, մի հեռացիր:

I. 29. Արղիևիև

Թե այսպես է, ո՛վ Իսկական, ըմպող գիևի,
Որ ապրում եևք կարծես անհույս,
Տուր մեգ դու հույս, ո՛վ Արղիևի,
Կովեր, ձիեր, հազար բարիք տուր ի վերուստ,
ո՛վ գերհարուստ:

Ո՛վ գեղաշուրթ, տեր պարգևի,
Չորեղ, քոևս է ուժը անզուսպ:
Տուր մեգ դու հույս, ո՛վ Արղիևի,
Կովեր, ձիեր, հազար բարիք տուր ի վերուստ,
ո՛վ գերհարուստ:

Անզարթ քնով թող քոևս լիևի
Կեղծահայացք չարը անկուշտ:
Տուր մեգ դու հույս, ո՛վ Արղիևի,
Կովեր, ձիեր, հազար բարիք տուր ի վերուստ,
ո՛վ գերհարուստ:

Եւ թող ժլատ մարդը քևի,
Առատաձեռնը չտա կորուստ:
Տուր մեգ դու հույս, ո՛վ Արղիևի,
Կովեր, ձիեր, հազար բարիք տուր ի վերուստ,
ո՛վ գերհարուստ:

Եւ կործանի՛ր ուժով առևի
Ոռնող էշիև հույժ գարշելի:
Տուր մեգ դու հույս, ո՛վ Արղիևի,
Կովեր, ձիեր, հազար բարիք տուր ի վերուստ,
ո՛վ գերհարուստ:

Թող սուրբ ծառից հեռու տանի
Չարագուշակ թռչիև քամիև:
Տուր մեգ դու հույս, ո՛վ Արղիևի,
Կովեր, ձիեր, հազար բարիք տուր ի վերուստ,
ո՛վ գերհարուստ:

Բեր կործանում ճվճվանիև,
Բարեհոգուն՝ բարի գալուստ:
Տուր մեգ դու հույս, ո՛վ Արղիևի,
Կովեր, ձիեր, հազար բարիք տուր ի վերուստ,
ո՛վ գերհարուստ:

Մարութերիև

Երբ դուք այդպես հեռվից հեռու որպես հուր
Դիրդյուն եք չափված ժայտքում, դեպի ո՛ւր,
Եւ ո՛ւմ, ասեք, ո՛վ Մարութեր, մտքի ուժով եք շարժվում
Ո՛ւմ ահարկու կերպարանքև եք, ո՛վ ցնցողներ, ընդունում:

Թող ամուր լիևի ձեր գեևքը, որ վանեք,
Պիևդ, որ դուք գրոհը ետ մղեք,
Եւ ձեր ուժը զարմանալի ավելի,
Քան թե ուժը մահկանացու-կախարդի:

Իևչ որ կարծր է դուք փշրում եք անխնա,
Իևչ որ ծանր է գլորում եք, ո՛վ Արիք:

Ճամ ու ճուղ ամուր հեծած գետնի վրա
Սլանում, անցնում եք դուք լերինք:

Չկա ոտիս ձեզ արժանի ոչ երկնքում
Եւ ոչ երկրի վրա: Այլոցն եք դուք հսկում:
Եւ թող ձեր ուժը աննահանջ ընդմիշտ լինի,
Ո՛վ Վահագնյանք, շնորհիվ ձեր հար դաշնի:

Դուք ցնցում եք ու քանդում ժայռեր, լեռներ,
Արմատախիլ եք դուք անում հսկա ծառներ:
Դուք նետվում եք, ասես հարբած, ո՛վ
Մարութներ,
Ձեր ողջ զարմով անպարտելի, ո՛վ Աստվածներ:

Դուք երփներանգ այծքաղներ եք լծել
մարտակառքերին
Շիկակարմիրը քաշում է որպես կողալիծ
Ինքը երկիրն է ունկնդիր ձեր երթին
Մարդիկ են վախենում

III, 59. Միհրին

Միհրը՝ մտերիմ աստվածը կարգավորում է մարդկանց,
Միհրը Առյուծ, երկինք, երկիր կրում-պահում է կանգնած,
Միհրը անթարթ լույս է տալիս ազգերին ողջ աշխարհի,
Միհրին արի, զարմանալի զոհ մատուցեք ճարպալի:

Թող բոլորին գերազանցի մահկանացուն, ո՛վ Միհր,
Որ քեզ համար ուխտակատար մատուցում է միշտ զոհեր:
Անխոցելի ու անհաղթ է աջակցյալը մեծ Միհրի
Ու ո՛չ հեռվից, ո՛չ մոտիկից նրան փորձանք չի հասնի:

Ցավերից գերծ ու զորացած ուժով առատ զոհերի,
Ամուր կանգնած մենք ծնկաչոք ողջ տարածքում մեր երկրի
Ու միհրական վեհ, իմաստուն պահպանելով պատգամներ
Միհրի լույսով պիտի սնվենք: Թող ողորմա մեզ Միհր:

Միհրը արի միշտ բարեհաճ եւ հարգարժան դարեդար
Շավեց որպես բարեհիշխան արթա, ծեսի ղեկավար
Եւ թող լինենք նրա ազնիվ համակրանքին արժանի,
Միհրին անվերջ, մեծ, զոհարժան, որ միշտ իր հետ մեզ տանի:

Եղեք մաքուր, եղեք խոնարհ մոտենալիս մեծ Միհրին՝
Թելադրում է կարգը մարդկանց, բարեհաճ է իր երգչին,
Եւ ամենազարմանալի Միհրին առատ զոհ ձոնեք,
Չոհ տենչալի, զոհ ճարպալի: Առատ ի հուր այն հեղեք:

Օգնությունդ, մեծ սատարիչ Միհր աստված,
Յարուստ ավար է բերում:
Դու կանգնած ես ամենափայլ փառքով օծված:

Ո՞վ վեհությամբ երկինքն անցավ՝
Յեռուն տարածվող Միհրը.
Իր փառքով նա երկիրն անցավ:

Օգնությունն է ուժը Միհրի:
Յինգ ազգ նրան ենթարկվեց:
Բոլոր դիցաց նա կբերի:

Եւ դիցաց մեջ, եւ մարդկանց մեջ
Չոհածողոտ դարսած մարդուն
Ըստ խոստումի կհատուցի Միհրը անվերջ:

Վլադիմիր Վիսնցկիյ

Գայլերի որսը

Ձիւ չմնաց, ճղում եմ ես ինձ
Ինչ երեկ էր՝ նույնն է, ավաղ:
Շրջադրել են ինձ, շրջապատել են,
Յալածում են, բռնում են ուրախ:
Ծամերի ետեւից կրակում են.
Որսորդներն են այնտեղ թաքնվում
Ձյան վրա գլորվում են գայլերը,
Կենդանի թիրախներ են դառնում:

Գայլաորս է ընթանում, գայլերի որս է
Գորշ գիշատիչ գազանների, քոթոթների:
Գոռում-գոցյուն է եւ շները կաղկանծում են,
Ձյուն արյունոտ եւ ալ պուտեր դրոշակների:

Յավասար չեն խաղի պայմանները
Բայց չի դողա ձեռքը մարդկանց
Դրոշներով են նեղել մեր արծակը
Մեզ խփում են հաստատ համոզված:
Ընդունակ չենք փոխել ավանդույթը.
Երեւի դեռ մանուկ օրերից
Մայր գայլից ենք ծծել - «Արգելված է
Ելնել կարմրապուտ օղակից»:

Գայլաորս է ընթանում, գայլերի որս է
Գորշ գիշատիչ գազանների, քոթոթների:
Գոռում-գոցյուն է եւ շները կաղկանծում են,
Ձյուն արյունոտ եւ ալ պուտեր դրոշակների:

Ծնոտներն ու ոտքերը մեր պինդ են,
Էլ ինչո՞ւ ենք մենք միշտ հալածվել
Եւ սուրում ենք դեպի համազարկը՝
Չենք փորձում մենք արգելքը անցնել:
Այլ կերպ չի կարող գայլը վարվել:
Ահա ժամանակն իմ սպառվեց
Ահա նա, ում բաժին ես հասել
Ծուռ ժպտաց ու հրացանը հանեց:

Գայլաորս է ընթանում, գայլերի որս է
Գորշ գիշատիչ գազանների, քոթոթների:
Գոռում-գոցյուն է եւ շները կաղկանծում են,
Ձյուն արյունոտ եւ ալ պուտեր դրոշակների:

Յնազանդությունից ես ելա
Չորագույնը ծարավն է կյանքի:
Դուրս օղակից՝ եւ լսում եմ ուրախ
Ետեւում ես ձայներ զարմանքի:
Ձիւ չմնաց, պատռում եմ ես ինձ
Բայց անցել են արդեն հին օրերն.
Շրջադրել էին, շրջապատել էին ինձ,
Բայց անորս մնացին որսորդներն:

Գայլաորս է ընթանում, գայլերի որս է
Գորշ գիշատիչ գազանների, բորթոթների:
Գոռում-գոչուն է եւ շները կաղկանծում են,
Ձյուն արյունոտ եւ ալ պուտեր դրոշակների:

Ալեքսանդր Կոչետկով

Բալլադ ծխաթաթախ վագոնի մասին

- Որքան, իմ սեր, տարօրինակ է՝
Յյուսված հողում եւ ճյուղերով եւ
Որքան, իմ սեր, տարօրինակ է
Երբ երկատվում ես սղոցով:
Թե չփակվի սրտերիս վերքը՝
Արցունքներով ջինջ կարտասվենք եւ,
Թե չփակվի սրտերիս վերքը՝
Մենք կարտասվենք հրո խեժով:

- Քանի դեռ կամ, քեզ հետ եմ, սեր իմ՝
Յոգին, արյունը անբաժան են,
Քանի դեռ կամ, քեզ հետ եմ, սեր իմ՝
Եւ սերն ու մահն են անբաժան:
Ամենուրեք կլինի հետդ՝
Մի մոռացիր, իմ սեր, երբեք ինձ,
Ամենուրեք կլինի հետդ,
Յարագատ տունդ հայրական:

- Իսկ թե անզո՞ր եմ պաշտպանվել ես
Մի անամոք, անհույս թաղծից իմ,
Իսկ թե անզո՞ր եմ պաշտպանվել ես
Եւ ցրտերից, եւ խավարից:

- Կա բաժանում, բայց կա եւ դարձը
Մի մոռացիր, իմ սեր, երբեք ինձ,
Կա բաժանում, բայց կա եւ դարձը
Դեռ մենք կըհանդիպենք նորից:

- Իսկ թե հանկարծ անհայտ կորե՞մ ես՝
Օրվա շողի փքրիկ մի լույսս,
Իսկ թե հանկարծ անհայտ կորե՞մ ես
Աստղակաթի գոտու ծխում:

- Աղոթելու եմ քեզ համար ես,
Որ չկորցնես երկրային լույսը
Աղոթելու եմ քեզ համար ես,
Որ անվնաս դառնաս դու տուն:

Նա վագոնում ծխոտ ցնցվում էր
Եւ կես լալիս էր, կես ննջում էր,
Նա վագոնում ծխոտ ցնցվում էր
Իրեն զգալով անտուն ու հեզ,
Երբ սայթաքուն լանջին գնածքը
Սարսափելի հանկարծ ճկվեց եւ,
Երբ սայթաքուն լանջին գնածքը
Անիվներով գծից պոկվեց:

Ամմարդկային ահագին ուժը
Երկրից նետե՞ց դեն երկրայինը,
Ամմարդկային ահագին ուժը
Մեկ մամլակում ճզմեց մարդկանց:

Ու չփրկեց եւ ոչ մեկին էլ
Յեռու հեռվում կանչող տեսիլքը,
Ու չփրկեց եւ ոչ մեկին էլ
Յեռու սպասումը խոստացած:

Մի բաժանվեք սիրածներից ձեր,
Մի բաժանվեք սիրածներից ձեր,
Մի բաժանվեք սիրածներից ձեր,
Դուք իրենց մեջ արևով աճեք,
Եւ գեթ մի պահ հեռանալիս էլ,
Եւ գեթ մի պահ հեռանալիս էլ,
Եւ գեթ մի պահ հեռանալիս էլ,
Նրանց ընդմիջտ հրաժեշտ տվեք:

1932

Միխայիլ Խսակովսկի

Լսիր ինձ, սիրունիկս իմ

Լսիր ինձ, սիրունիկս իմ,
Լսիր ինձ գեղեցիկս իմ,
Վերջալույսի շողիկս եւ
Ամմարելի դու սերս իմ:

Անցնում եմ փողոցովը ես,
Լուսնակն է շողշողում երկնին:
Լուսնակն է շողշողում երկնին,
Որ մենք իրար տեսնենք կրկին:

Եւ սուր-սուր մանգաղները դեռ
Դաշտի խոտերը չեն հնձել,
Եւ թխենու ճյուղերը դեռ
Բորլո՛րը չեմ շեմիդ դրել:

Երիտասարդությունն էլ մեզ
Շուտո՞վ չի դեռ հրաժեշտ տալու,
Սիրիր, քանի դեռ սեր ունես
Եւ ցանկություն ինձ մոտ գալու:

Արի ինձ մոտ լավիկս իմ,
Արի ինձ մոտ սիրունս իմ,
Վերջալույսի շողիկս եւ
Ամմարելի դու սերս իմ:

Նիկոլայ Գոգոլ

Ռոմանս

«Հանս Զյուհելիարթեն» պոեմից

Քեզ եմ կանչո՛ւմ, քեզ եմ կանչո՛ւմ,
Քո ժպիտով եմ զմայլվում ես,
Քեզ հետ ժամեր եմ անցկացնում,
Քեզնից հայացքս չեմ թեքում.
Եւ հիանում չեմ կշտանում ես:

Եւ թե երգես՝ քո խոսքերի
Խորհրդավոր, անմեղ դողանջը
Կհնչեցնի լույս ճաճանջը
Սոխակի երգ կընկնի ականջս,
Արժաթ առվակը կաղմկի:

Օ՛հ, եկ ինձ մոտ, սեղմվիր ինձ տաք,
Երբ հրավառ են մեր հույզերը:
Սրտումս այրվում է բոց անհագ:
Շնչում են հուր, ծնում կրակ
Խաղաղաշունչ քո շարժումները:

Տխրում եմ երբ չկաս, տանջվում,
Չեմ մոռանում քեզ, իմ միակս,
Եւ արթնանում եմ, թե քնում՝
Միշտ քեզ համար եմ աղոթում,
Միշտ քեզ համար, քնքուշ հրեշտակս:

թրգմ. 16.09.93